ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԵՄԱՆ ԺԱՆՍԵՄԻ ՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Ներսեհ Արդ. Ալոյեան

-Ա-

Ժանսեմը ծնուել է Թուրքիայի Սէօլէօզ քաղաքում 1920 թուականին: Մայրը այդ ժամանակների հազարաւոր հայուհիների նման ունեցել էր դառը ճակատագիր: Հրաշքով էր փրկուել, որ յետոյ դառնայ մեծ նկարչի մայր: Ընդամէնը 13, 14 տարեկանում փոքրիկ աղջիկն անցել էր Տէր էլ Զօրի անապատը, տեսել ու վերապրել Հայոց Յեղասպանութիւնը: Ամուսնու մահից յետոյ կինը զաւակին վերցնում է եւ տեղափոխւում Յունաստան: Մի քանի տարի անց փոքրիկ տղան կոտրում է ոտքը: Տեղի բժիշկները շատ անյաջող կոտրուածքը չեն կարողանում բուժել եւ սկսում է ոսկրաբորբ: Բուժման նպատակով մայրը որոշում է երեխային տեղափոխել Ֆրանսիա: Նա բուժւում է, բայց էլ երբեք վազել չի կարողանում: Ոտքի մասնակի անդամահատում էր արուել:

Երեք տարի Յովհաննէսը, ֆրանսերէնով Ժանը, անցկացնում է հիւանդանոցներում, որտեղ էլ սովորում է ֆրանսերէն լեզուն: Հիւանդանոցում մնալը էական դէր է խաղում նրա կեանքում: Եղբայրը մի տուփ իւղաներկ է նուիրում, որ Ժանը պառկած վիճակում չձանձրանայ՝ նկարելով զբաղուի, եւ Ժանը նկարում է: 11 տարեկանից սկսում է նկարել իւղաներկով:

Ապաքինուելուց յետոյ տղան ընդունւում է Մոմպառնասի ազատ ակադեմիաները: Դա 1934 թուականն էր: Սա մասնագիտական առաջին դպրոցն էր: Երկու տարի անց ուսումը շարունակում է Փարիզի զարդարուեստի բարձրագոյն դպրոցում: Ապա մէկ տարի կատարելագործւում է Սաբաթիէյի արուեստանոցում: 1944 թ. սկսել է ցուցադրուել «Անկախների» յայտնի ցուցասրահում՝ «Ջուրակահարը» նկարով:

Ստեղծագործութեան առաջին շրջանում հիմնականում հանդէս է եկել ազգային թեմաներ շօշափող գործերով, թէեւ Հայոց Յեղասպանութեան մասին գիտէր միայն մօր պատմածներով: Հզօր են մանկութեան տպաւորութիւնները, եւ ինչպէս ինքն էր ասում. «Արուեստը ինքնակենսագրութիւն է»: Նա վրձնով պատմում էր մի վշտի մասին, որն անձամբ չէր տեսել, բայց արեան կանչով, թէ գենետիկ յիշողութեամբ վերարտադրում էր այն, ինչին այդքան ցանկանում էր մօտեցնել իր հանդիսատեսին:

Պատերազմի ծանր տարիներից յետոյ յատկապէս Ֆրանսիայում տարածում է գրտնում կեանքի բնական իրավիճակից ծնուած՝ մարդկային տխրութիւնը, յուսահատութիւնը, ճնշուածութիւնը, միայնութիւնը արտացոլող արուեստի իրապաշտական մի ուղղութիւն, որի առաջնորդներն էին Գրիմները, Բիւֆֆեն, Ռեբերոնը, Մինոն, Գառզուն եւ ուրիշներ: Այդ հոսանքը հող է նախապատրաստում նաեւ երիտասարդ Ժանսեմի համար: Նկարիչն ասես գտնում է իրեն, հաւատում սեփական ասելիքին, նրա համամարդկային բնոյթին:

Ժանսեմի կեանքում նշանակալից եղաւ նրա ճամբորդութիւնը Յունաստան (1950) եւ Իտալիա (1952-1956): Այս երկրներն օգնեցին նկարչին ընդլայնելու իր հետամտած թեմաները, գտնելու իր ներսին հարազատ՝ իրեն մօտիկ մարդկային կերպարներ, իր նախասիրութիւններին արձագանքող կեանքի մթնոլորտ: 1950-ական թուականներից Ժանսեմի արուեստը լայն ճանաչում է ձեռք բերում: Նրա ստեղծագործութիւնը պերճախօս վկայութիւնն է սեփական յուզաշխարհին հաւատարիմ մնալու

ԺԱՆՍԵՄ
իր
արուեստանոցին
մէջ

digitised by A.R.A.R.@

օրէնքին: Արուեստի օրէնքը նման է բնութեան օրէնքին: Ամէն ծառ իր պտուղն ունի: Իսկական արուեստը մարդու հոգեկանի բիւրեղացումն է: Գոյնի, գծի, լուսաւորութեան, գունային խօսուն մակերեսի, յուզականութեան, պատկերի կառուցողական բոլոր օրէնքներով Ժանսեմի ներաշխարհին սերտօրէն առնչուած է նրա արտայայտչաձեւի ինքնորոյնութիւնը, սեփական ոճը: Նրա փայլուն տաղանդն ու անդուլ աշխատասիրութիւնը արդի արուեստին պարգեւել են ուրոյն մի աշխարհ, որն արդէն հաստատուել է որպէս զուտ Ժանսեմական:

Ժանսեմի ստեղծագործութեան թեման սկիզբ է առնում իր մանկութեան յիշատակներից՝ մայր ժողովրդի մեծ արհաւիրքից: Անցնող ժամանակը արուեստագէտի վրայ նկատելի ազդեցութիւն չի ունեցել: Նա շարունակել է անընդհատ խորանալ ու կերտել իր յուզառատ ու իւրօրինակ աշխարհը:

Վաղ շրջանի կտաւների փոքրիկ հերոսների «դերում» Ժանսեմը յաճախ պատկերել է իր զաւակներին: Ներկայացնելով նրանց՝ նկարիչը խօսել է իր մանկութիւնից, կերպաւորելով մեծ փոքրիկի շարունակուող ալեծփումը: Այդ մանուկները, լինեն տանը թէ փողոցում, միշտ ոտաբոբիկ են, ցնցոտիներ հագած ու տառապանքի դրոշը դէմքներին:

Բոլոր ժամանակների մեծագոյն վարպետն էր Ժանսեմը, որովհետեւ նրա ջինջ ու մոգական արուեստը ժամ ու ժամանակի սահմաններ չունեն: Նրա իսկական յաղթանակն այն էր, որ հնագոյն քաղաքակրթութեան կեդրոնում կարողացել էր հաստատել իրական կեանքին առնչուած իր արուեստը, որն ընկալում է իբրեւ մարդասիրութեան առաքելութիւն, եւ գեղանկարչութեամբ դուռ բացում դէպի կեանքի եւ պատմութեան աշխարհը:

Կանխորոշուած թէ ոչ, Ժանսեմը ճանաչուած էր: Ունեցել է ցուցահանդէսներ Փարիզում, Նիւ Եորքում, Չիկագոյում, Լոնդոնում, Տոկիոյում, Հռոմում, Բրիւսելում, Լօզանում, Պէյրութում, Մոսկուայում: Նրա կտաւներից շատերը հանգրուանել են Եւրոպայի ու Ամերիկայի մի շարք թանգարաններում ու անհատական հաւաքածուներում:

Ինչպէս ասում են՝ «ազնիւ արուեստը ազգութիւն չի ճանաչում»:

Ճապոնացիները առանձնայատուկ վերաբերմունք են տածում Ժանսեմ գեղանկարչի մեծութեան եւ արուեստի նկատմամբ եւ իր կենդանութեան օրոք Ճապոնիայում բացուել է նրա անուան երեք թանգարան: Միջազգային համբաւի հասած նկարիչը չէր սիրում խօսել իր նուաճած մրցանակների եւ կոչումների մասին, որոնք ծանրակշիռ պարգեւներ էին գեղանկարչութեան բնագաւառում: Դրանցից առաջինը «Antral» մրցանակն էր, որը ճանաչման լայն ուղի դուրս բերեց Ժանսեմին: Ապա 1954 թուականին նրան ազգային կենսաթոշակ նշանակուեց: 1956-ին ընտրուեց երիտասարդ նկարիչների սրահի նախագահ: Բազմաթիւ պարգեւների շարքը համալրեց «Պատուոյ լեգէոն» շքանշանը:

Արշիլ Գորկին ասել է. «Եթէ նկարչութեան մէջ գծանկար չկայ, ուրեմն դա նկարչութիւն չէ»: Ժանսեմը գծանկարի մեծ՝ բացառիկ վարպետ էր, ով գծով արտայայտել գիտէր մարդկային յաւերժական արժէքները:

(Շարունակելի - 1)

«Ես միշտ եղած եմ Հայաստանի մէջ հոգիով եւ սրտով. այս իսկ պատճառով չեմ կրնար չյուսալ ու չարտասուել ամէն անգամ երբ Հայաստան կ՚այցելեմ»:
Ժանսեմ

Ժանսեմ, «Մայր եւ որդի»

digitised by A.R.A.R.@